# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՔՍԻՏՈ ՍՊԸ-ն ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/02 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 4 | Էքսիտո | Էքսիտո | Էքսիտո | Էքսիտո | Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի հրամանով սահմանված պահանջներին համապատասխան, Մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները կհամաձայնեցվի մանկապարտեզի տնօրինության հետ: Մանկական սեղանը պատրաստված է էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, Էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նյութերով, անկյունները կլորացված։ Ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվում է սեղմ ժամկետներում կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում։ Ապահովվում է էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը կկատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների։ Ապահովվումէ էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը կլինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով։ Մետաղական հիմնակմախքով մանկական սեղանի չափսերն են՝ 1000 x 700 x 430 մմ (Ե x Լx Բ)։ Սեղանի աշխատանքային հարթության համար օգտագործվում է լամինացված E0դասի ՓՏՍ ՝ 18 մմ հաստությամբ։ Լամինացված ՓՏՍ E0դասի աշխատանքային հարթության եզրերը հղկված, մշակված և ողորկ, առանց ծլեպների, շրջափակվում են համապատասխան հաստության |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պլաստիկ եզրաժապավենով (օրինակ՝ PVC)։ Բոլոր անկյունները կլորացվում են։ Սեղանի կմախքը պատրաստված է 25 x 25 x 2.0 մմ չափսի մետաղական քառանկյուն խողովակներից, կմախքի արտաքին չափերը՝ 800 x 600 x 381 մմ (Ե x L x Բ), որին՝ զոդման միջոցով ամրացվում են 20 x 20 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակից 4 մետաղական ոտքերը, որոնք էլ զոդման եղանակով շրջանաձև կապով միացվում են իրար հետ 15 x 15 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակով։ Ոտքերը խցանված կլինեն պլաստիկե խցաններով՝ 6 մմ հաստությամբ։ Վերոգրյալ չափսերը խիստ համամասնորեն համապատասխանում են համապատասխան տարիքային խմբի համար պատրաստվող աթոռների չափսերին՝ դրանց միաժամանակյա հարմարավետ շահագործման նպատակով, որից ելնելով հնարավոր են թույլատրելի նշված չափսերից որոշակի շեղումներ։ Զոդման կարանները մշակված, ողորկ, մետաղը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | փոշեներկվում է բարձրակարգ, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ ներկանյութով՝ առանց անհարթությունների, միատոն և համասեռ ներկանյութով: Նմուշները մինչ մատակարարում կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ կներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա կկատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթղթը, արտադրման ժամանակ |

օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կկատարվի հայերեն, ընթեռնելի տարբերակով: Մակնշումը կկատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում վերոգրյալ տեղեկատվությունը կամփոփվի ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ` տեխնիկական անձնագրում):

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ЭКСИТО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-2024/02 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 4 | | | | | |
| | | | | | |